ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 166
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքը (Գուդեմնիս բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ
(Մեղրի համայնքի (Գուդեմնիս բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքը (Գուդեմնիս բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Սյունիք-3 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի (Գուդեմնիս բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
0.0025 հա մակերեսով (09-029-0120-0027 կադաստրային ծածկագրից) գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք	0.0025 հա մակերեսով (09-029-0120-0027 կադաստրային ծածկագրից) էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ էներգետիկայի հողեր
0.0072 հա մակերեսով (09-029-0112-0001 կադաստրային ծածկագրից) գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր	0.0072 հա մակերեսով (09-029-0112-0001 կադաստրային ծածկագրից) էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ էներգետիկայի հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Մեղրի համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի (Գուդեմնիս բնակավայրի) ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի (Գուդեմնիս բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա.Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, «12» «օգոստոսի» 2022 թ.